ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՏԱՆԻՔՆԵՐԻՑ

Էդ բաստուրմայի հոտը խելքահա՞ն է անում: Հրանուշ տատի տանիքի տակ շարքով կախուած՝ խելքահան են անում մարդու: Հոտը մտել է քիթս ու դուրս չի գալիս,հո զոռով չի՞:

Ֆուտբոլի խաղը թողել, աղաւնիներիս բոյնը թողել, կուչ եմ եկել Հրանուշ տատի տանիքի տակ: Հոտը մտել է քիթս.- ճար չկայ:

Բոպիկ ոտներս ինձ տանում են ու կանգնեցնում Հրանուշ տատի դռան առաջ: Ձեռքս ճռռոցով բացում է դուռը: Հրանուշ տատը թեքուել է աղբիւրին՝ չամանոտ ամանն է լուանում: Էդ բաստուրմայի հոտից քիթ ու բերնիցս լորձունքը ծորու՞մ է...

- Հրանուշ տատի .- թուքս կուլ եմ տալիս, թեւքով սրբում քիթս,-...
- Բաստուրմա չկա: Առ, եթէ կուզես, էս չամանոտ ամանը քերի, կե՛ր: Ախչի, էն շուն ու կատուին քշէք, բաստուրմաներին վնաս չտան,- էդ արդէն հարսին է ասում:

«Լա՞ւ, Հրանուշ տատ, շուն ու կատուն չգիտեմ, բայց քո բաստուրմաներից մէկն ինձ մատաղ ես անելու»,- էդ արդեն մտքիս մէջ եմ ասում ու դուրս վազում:

Հրանուշ տատը ետևիցս էլի ինչ-որ բաներ է ղռղռում, բայց էդ արդէն հեչ կարևոր չէ:

Ես գիւղի փողոցով վազում եմ աղաւնիներիս բոյնը՝ ճամփին ջրափոսերը չընփացնելով ու գիշերային ծրագրերս մշակելով:

Խնդիրը բարդ է: Ես իմ մի մատ հասակով Հրանուշենց տանիքը դրսի պատով բարձացողը չեմ: Բակից մտնելը բացառուում է: Սրանց Մուխթառ շանը Աստուած տուել՝ չի խնայել. երկու իմ բոյին: Մեր տանից մինչեւ Հրանուշենց տանիք երկու տուն էլ կայ: Աղաւնիներիս բնից ուսումնասիրում եմ տեղանքը. անցնել կարելի է: Ցերեկով մի քանի անգամ փորձել եմ, բայց գիշերով, ըստ տատիս, սատանաներն ու արջամարոզները ոտքիցդ քաշում եւ ուղիղ դժոխք են տանում:

Էդ արդէն լուրջ հարց է: Բայց բաստուրմաների հոտն ու շարանը այնքա՞ն գերող են, որ հազար արջամարոզ էլ լինի՝ինձ կանգնեցնող չեն: Յետոյ էլ տատս իր հին պատմութիւններն է քրքրել, փեշերի տակից հանել: Ոչ մի սատանա էլ չկայ, էդ հո դպրոցում անցել ենք:

Ուրեմն գործի: Ճիշտ այն ժամանակ, երբ արեւը հսկայ ծուածեղի պէս սարի ետևն էր իջնում,ամպերն էլ ճիշտ բաստուրմայի գոյն էին ստացել, իսկ տանիքներին կուչ եկած խոտի դէզերն ու եղանները ճիշտ արջամարոզներ էին յիշեցնում, ես կամացուկ ծլկեցի տնից ու պատին յենուած աստիճանով տանիք բարձրացայ: Մեր հարևանի պատը կպած է մերինին, էնպէս որ անցնելը դժուար չէր. մի փոքր ցատկ՝ ու ես թեւը կտրած Բալաբէկի տանիքին եմ: Պատերազմում է թեւը կորցրել: Օդաչու է եղել: Հրե՞ն, դուրսը նստած դանակը քսում է սանդու քարին: Կուզեկուզ անցնում եմ հողէ տանիքն ու հասնում Լաչառ Վարդուշենց տանիք: «Լաչառ» անունը ես եմ դրել: Ի՞նչ էր եղել՝ աղունիկներս ծրտել էին սրանց լուացքի վրայ: Էլ ո՞նց կը լինէր, եկել էր տատիս բողոք: Երկու ժամ մանեկան որ ինձ քոթակեն՝ չգտան: Մտել էի գինու կարասի մէջ:

Յետոյ նստեցին՝ սուրճ ու զրոյց, մոռացան: Լաչառ Վարդուշն էլ, թէ.

digitised by A.R.A.R.@

-Ախչի Արաքսի՛, ինչի՞ համար էի եկել: Թողեց գնաց իրենց տուն : Անմարդ կնիկ ա: Մարդու սև թուղթը պատերազմից եկաւ:Ինքն ա ու իր հինգ երեխան:

Արեւը կարծես միանգամից մտաւ սարի ետևն ու ամէն ինչ մթնեց: Հիմա հասել եմ Հրանուշ տատենց տանիք, բայց բան չեմ տեսնում: Էդ պահին որտեղից-որտեղ տատիս պատմած սատանաներն ու արջամարոգները միտս ընկան: Հիմա հասել եմ Հրանուշենց տանիք, բայց «ռիսկ» չեմ անում ցատկել: Կարծես երկու պատերի արանքում աշխարհիս բոլոր սատանաներն ու արջամարոգները հաւաքուել ու սպասում են իմ ցատկին: Իսկ ծղօտէ պատից այն կողմ բաստուրմաները բուրու՜մ են...

Այդ հոտն աւելի զօրեղ գտնուեց, մտքիցս հանեց տատիս վախերն, ու հո՛պ, թռա Հրանուշ տատի տանիք: Ծղօտէ պատի մէջ անցք բաց արի ու մտայ բաստուրմաների արքայութիւն: Ճի՛շտ է, լաւ չեմ տեսնում, բայց զգում եմ. ահա գլխիս վրայ չղջիկների պէս կախուած՝ բուրու՜մ են... Շօշափեցի ու գտայ ամենամեծ կտորը, գրպանիցս հանեցի դանակը, որ աւելի պատրաստել էի սատանաների դէմ պայքարի համար, կտրեցի թելն ու մտցրի ծոցս:

Իջայ տանիքներից՝ մոռացած աշխարհ ու սատանայ և ուղիղ՝ գոմ: Ըստ իմ հաշուարկների, էդպիսի խոշոր կտորն ինձ մէկ շաբաթ կը հերիքէր: Ծամում էի աչքերս փակ, քիմքիս ու բերանումս զգալով բաստուրմայի անպատմելի համն ու հոտը:

Առաւօտեան ռումբը պայթե՜ց:

-Ախչի Արաքսի՛, էն թոկից փախածդ ու՞ր է, -հեղեղի պէս բակ էր մտել ու անէծքի պարկն էր բացել Հրանուշ տատը:

-Հրանուշ ջան, էլի լուսամուտ ա ջարդե՞լ, վա՜յ հողեմ նրա գլուխը:

- Բաստուրմանե՜րս չկան : Վա՜յ, աչքիդ լոյսը քոռանա, Հրաչ, վա՜յ: Այ ախչի, առտու կանուխ վեր ելնեմ ի՞նչ տեսնեմ...

Ու գնա՜ց: Խօսք ու անէծք, հին ու նոր պատմութիւններ: Էդ ամէնի վրայ Վարդուշն էլ տնկուեց սրանց կողքին, որտեղից-որտեղ յիշեց իր ծրտոտաց լուացքն ու էլի ինչ-որ գժութիւններ իմ անցեալից: Էդ կանչ ու անէծքի մէջ հասցրին սուրճ դնել ու բազմեցին սանդու քարին:

-Քրքրուես դու, հլա դուրս արի:

Ես, ամենախիզախ պարտիզանի պէս, կանգնեցի սրանց առջև ու երդում -պատարագ, որ լուր չունեմ, թէ ով է գողացել: Չեմ էլ նկատում, որ ծոցս ու շապիկս չամանոտ է, ես էլ բուրու՜մ եմ...

Չեմ գողացել ու վերջ:

Երեկոյեան հայրս մտաւ տուն: Տնեցիք պատմեցին եղածը: Դրանից յետոյ ամէն ինչ պարզ էր: Ես գիտէի, որ հայրս չի խօսելու ու ես էլ չեմ արդարանալու: Ամէն ինչ պարզ էր: Պէտք էր ուղղակի մի դոյլ ջուր բերել ու դնել հօրս առջև,հօրս շալվարից հանել կաշվե գօտին ու դնել դոյլի վրայ,իջեցնել վարտիքն ու փորի վրայ պառկել թախտին: Ամէն ինչ պարզ էր...

Անցել են տարիներ: Եղածն էլ մեծ բան չէր կարծես: Բայց, ա՜յ, ինչու եմ յիշում կեղտոտ ու բաստուրմայոտ շապիկով այդ լակոտին, լաչառ Վարդուշի ծերտոտ լուացքը, հօրս խոժոռ աչքերն ու յետոյքիս դաղուած տեղերը, ինչից է, որ այդքան քաղցրութեամբ եմ յիշում տատերիս անէծք - օրհնանքները եւ ինչու էին այդքան անուշ բուրում բաստուրմաները, ինքս էլ չգիտեմ:

Ինչ - որ մի քաղցր յուշ մանկութեան տանիքներից ինձ խելքահա՜ն է անում...

digitised by A.R.A.R.@

ՍՊԱՍՈՒՄ

Նրանք չորսն էին. երկու եղբայր, երկու քոյր: Ճիշտ հէքիաթի պէս: Ճիշտ հէքիաթի պէս էլ ամենափոքրն էր առաւել ծանր տանում եղածը: Միւսներն էլ էին տխուր, բայց փոքրիկ Գրիգորի աչքերի թախիծն ուրի՜շ էր: Այդ թախիծը այդպէս էլ նրա աչքերից դուրս չեկաւ:

Իսկ ինչ որ եղել էր, այնքան էլ հէքիաթի պէս չէր. կեանքի պէս էր, մարդկանց պէս: Այդպէս լինում է: Արթնանում ես ու մայրդ չկայ: Թողել գնացել է: Գնացել է աւելի լաւ ամուսին ու աւելի լաւ զաւակներ փնտռելու: Ի՞նչ իմանաս ինչի է գնացել: Գնացել է ու վերջ: Ու դու գլուխդ կախ քայլում ես թաղի միջով, ու դու ամաչում ես ուրիշների աչքերին նայել:

Գրիգորը գլուխը կախ էր քայլում:Մտածում էր, որ աւելի լաւ կը լինէր մայրը մահանար, քան թէ լքէր: Այդ ժամանակ չէր ամաչի մարդկանցից: Երանի՜ մահանար: Ինքն ամէն օր գերեզման կը գնար, թարմ ծաղիկներ կը տանէր մօրը ու կը զրուցէր նրա հետ: Ու մայրը կը պատասխանէր: Կ'ասէր, որ քոյրերին չնեղացնի, կ'ասէր, որ տաք հագնուի, արդէն ձմեռն է մօտենում: Մէկ էլ կ'ասէր, որ իրեն շատ է սիրում, ու որ գեղեցիկ են ծաղիկները: Եւ ինքն ուրախ տուն կը դառնար:

Հիմա տարբեր է: Չի կարողանում խօսել մօր հետ : Հարցեր չի տալիս: Չի էլ հարցնում, թէ ինչու գնաց, կամ չի՞ կարօտել իրեն: Մայրն էլ է լուռ: Միայն գիշերը, վերմակի տակ մի քանի բառ. "Մա՛մ, արի՜, մամ":

Ու մանկան արցունք, որ գլորուում էր աչքերից ու առաւօտեան չորանում բարձին: Ու փոքրիկ մի վիշտ, որ կորում էր մեծ քաղաքի փոշոտ փողոցներում, մարդկանց առօրեայ հոգսերում ու անհէքիաթ կեանքի վազքում:

Եկեղեցին թաղի մէջ էր: Առաւօտեան ժամերգութեանը համարեայ մարդ չէր լինում: Մի երկու ծերունի ու Գրիգորը: Գալիս էր լուռ , արշալոյսի շողի հետ եկեղեցու դռան ծածկոցից ներս էր մտնում, յենուում էր պատին, տխուր աչքերով նայում վառուող մոմերին: Ու այդպէս ամեն օր, ու այդպէս ամիսներ...

Այդ օրն ուրախ տեսայ իրեն, ջերմօրէն բարևեց: Աչքերը կրակ էին կտրել, ճակատը քրտինքի կաթիլներով էր պատել ու բարակ շապիկի տակից նկատելի էր սրտի բաբախիւնը: Ասաց,որ մայրը եկել է ու անպայման պէտք է գայ իրեն տեսնելու:

Երեկոյեան հարցրի դրացուս:

- Եկաւ էլ, գնաց էլ: Դատ - դատաստանի հարցեր ունէր: Էն լուս երեխեքին ոչ էլ տեսաւ: Ես էդ տեսակ մօր..., - թքախառն արդար հայհոյանք:

Գրիգորն էլ եկեղեցի չէր գալիս: Անցան օրեր: Հէքիաթը աւարտուած համարեցի: Բայց մի օր եկեղեցու դռան ծածկոցը բացուեց ու արշալոյսի շողը ճեղքեց ներսի խաւարը: Ու մի թոյլ մարմին յենուեց պատին ու զոյգ տխուր աչքեր անվերջ նայեցին վառուող մոմերին...

ԸՆՁԱՆՈՒԷՐ ԱԲՂ. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@